ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 95/6 -Լ «23» 05 2025թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2023 թ. մարտի 23-ի թիվ 9/2 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 5-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը համալրելու նպատակով 2025թ. հունիսի 26-ին՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն:

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ դեկանի ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին, գիտական քարտուղարին և ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ